



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 24 Օգոստոս, 2026

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմասպոլթիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմասպոլթիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

**Նայեաց սիրով, Հայրդ գթած, Ի քո ստեղծեալ գործս ձեռաց.
Եւ զբանակս Հրեշտակաց, Տուր պաշտպան մեզ տկարացս,
Փրկեա զանձինս ի փորձանաց, Ի խաւարի շրջող դիւաց.
Ձի ի տուրնջեան եւ գիշերի, Տացուք քեզ փառս անդուելի:**

ԱՊՈԹՔ

Ո՛վ Տէր Աստուած, օրհնեալ ես Դուն յաւիտեան, որովհետեւ բարի ես, եւ Քու ողորմութիւնդ յաւիտեան կը մնայ: Տէր, կը խոստովանինք Քու առջեւդ, որ բազմիցս մոռցած ենք Քու բարութիւնդ, շեղած ենք Քու ճամբէդ եւ ապաւինած մեր ուժերուն: Ներէ ու քաւէ մեր մեղքերն եւ անհնազանդութիւնը, մաքրէ՛ մեր սրտերը եւ դարձեալ հասարապէ՛ մեզ Քու ճշմարտութեանդ մէջ: Տէր, երբ մոռ-նանք Քու կարարած մեծ գործերդ, յիշեցո՛ւր մեզ Քու փրկութիւնդ: Երբ դժուարութիւններու մէջ ըլլանք, մի՛ ձգեր որ վախը եւ յուսահատութիւնը տիրեն մեր սրտերը: Սորվեցո՛ւր միշտ յիշել, թէ Դուն այն Աստուածը, որ կը լսես Քու ժողովուրդիդ աղաղակը եւ Քու ողորմութեամբդ կը փրկես զանոնք: Տէր, ազապէ՛ մեզ մեր սրտերուն կռապաշտութենէն, մեր հպարտութենէն, մեր ինքնա-վարա-հոյութենէն եւ այն ամէն բանէն, որ կը հեռացնէ մեզ Քու ներկայութենէդ: Տո՛ւր մեզի ապաշխարող սիրտ, հաւաքարիմ հոգի եւ հասարարուն հաւաքք: Սորվե-ցո՛ւր մեզի չնոռնալ Քու ողորմութիւնդ, այլ ամէն օր գոհութեամբ յիշել Քու բո-լոր բարի գործերդ մեր կեանքին մէջ: Երբ մենք Քեզմէ կը հեռանանք, վերադար-ձո՛ւր մեզ: Երբ մեր հաւաքքը կը տկարանայ, զօրացո՛ւր մեզ: Երբ մեր յոյսը կը մարի, վառէ՛ մեր սրտերուն մէջ Քու լոյսդ: Ո՛վ Տէր, փրկէ՛ մեզ, օրհնէ՛ մեզ եւ հաւաքէ՛ մեր սրտերը Քու սիրոյդ մէջ: Թող մեր կեանքը դառնայ գոհութեան եւ փառաբանութեան աղօթք, եւ թող մեր շրթները միշտ ըսեն. «Օրհնեալ ըլլաս, Տէր, որ բարի ես, եւ Քու ողորմութիւնդ յաւիտեան կը մնայ»: Քու Սուրբ Անունդ փառաւորեալ ըլլայ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայրնեցար փառն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչես-ցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւնէ ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

Օրհնութիւն երգեցէ՛ք Տիրոջ:

Գոհութիւն յայտնեցէ՛ք Տիրոջ՝ որովհետեւ բարի է,
որովհետեւ անոր սէրը յաւերժական է:

Ո՞վ կրնայ նկարագրել Տիրոջ անչափ զօրութիւնը,
կամ անոր ամբողջական օրհներգութիւնը հնչեցնել:

Երանի անոնց, որոնք իրաւունքը կը պահեն,
եւ մշտապէս արդարութիւնը կը գործադրեն:

Յիշէ՛ զիս, Տէր, երբ հանութիւնդ փու ժողովուրդիդ ցոյց տաս,
օգնէ ինձի, երբ փու փրկութեամբդ գաս:

Որպէսզի փու ընտրեալներուդ բարօրութիւնը տեսնեմ,
մասնակից ըլլամ ընտրած ազգիդ ուրախութեան,

եւ քեզ գովերգեմ փու սեփական ժողովուրդիդ հետ միասին:

Արդարեւ, մեր հայրերուն պէս մենք եւս մեղք գործեցինք,
անօրէնութիւն եւ յանցանք գործեցինք:

Եգիպտոսի մէջ մեր հայրերը չհասկցան սփանչելի գործերդ,
մոռցան անչափ բարիքներդ, եւ հազիւ թէ ծովը անցած,

հազիւ Կարմիր ծովը անցած՝ ապստամբեցան քեզի դէմ:

Հակառակ ատոր, Տէրը փրկեց զանոնք,

որպէսզի իր անունը փառաւորուի, եւ անոնք ճանչնան իր
զօրութիւնը:

Անիկա սաստեց Կարմիր ծովը, եւ ծովուն մէջ ցամաք բացուեցաւ,
եւ Տէրը իր ժողովուրդը անդունդներուն մէջէն անցուց,

ինչպէս ցամաք հեզի վրայէն:

Այսպէս զանոնք փրկեց իրենց ոսոխներէն,

թշնամիներու ձեռքէն ազատագրեց զանոնք:

Ապա ջուրերը ծածկեցին զանոնք նեղութեան մատնողները,
որոնցմէ ոչ ոք կենդանի մնաց:

Այն ատեն հաւատացին Տիրոջ խոստումին, եւ անոր գովքը երգեցին:

Բայց շուտով մոռցան անոր բոլոր ըրածները,

եւ մտիկ չըրին անոր տուած խորհուրդը:

Անապատին մէջ ուտելիքի ցանկութեամբ բռնուեցան,

եւ զԱստուած բարկացուցին ամայի այդ վայրին մէջ:

Ուստի Տէրը թէպէտ անոնց ուզածը տուաւ,

սակայն միաժամանակ անոնց վրայ մահացու հարուած բերաւ:

Անոնք նախանձէ մղուած,

հոն՝ բանակատեղիին մէջ ըմբոստացան Մովսէսի դէմ,

եւ Տիրուջ սուրբ ծառային՝ Ահարոնի դէմ:

Այն ատեն հողը բացուեցաւ եւ կլլեց Դաթանը,
 ողջ-ողջ ծածկեց Աբիրամի գերդաստանը:
 Կրակ ինկաւ անոնց ամբողջ գունդին մէջ, բոցը այրեց
 ամբարիշտները:
 Քորեք լեռան ստորոտին հորթի արձան շինեցին,
 եւ ձուլածոյ այդ կուտֆին երկրպագութիւն ըրին:
 Իրենց փառքը եղող Աստուածը
 խոտակեր եզի մը պատկերով փոխարինեցին:
 Մոռցան զԱստուած, իրենց փրկիչը,
 որ մեծամեծ գործեր ըրաւ եգիպտոսի մէջ,
 սփանչելի հրաշքներ կատարեց Քամի երկրին մէջ,
 ահաւոր բաներ ըրաւ Կարմիր ծովու ափին:
 Ուստի Տէրը ըսաւ՝ թէ զանոնք պիտի բնաջնջէ.
 եւ իրապէս իր գայրոյթին մէջ սպաննած կ'ըլլար զանոնք,
 եթէ Մովսէս, իր ընտրեալը, չմիջնորդէր անոնց համար:

ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹԸ



ՍԱՂՄՈՍ 106:1-24

105-րդ Սաղմոսին շարունակութիւնն է 106-րդ Սաղմոսը: Պատմութեան շարունակութիւնը: Այս անգամ ցոյց տալու Աստուծոյ բարութիւնը, Անոր յաւերժական սէրը հանդէպ իր ժողովուրդին: Հակառակ ժողովուրդին անհնազանդութեան ու անօրէնութեան: Խոստովանանքի Սաղմոս է, նախքան խոստովանութիւնը, սակայն, յիշելու Աստուծոյ բարութիւնը, յաւերժական սէրը, եւ այդ լոյսին տակ խոստովանելու, որպէսզի ներումի յոյսը ունենայ: Այլապէս խոստովանութիւնը պարզ թուում մը կ'ըլլայ, առանց արդիւնքի: Հարց կու տայ, թէ ո՞վ կրնայ նկարագրել Աստուծոյ գորութիւնը: Ապա կ'անդրադառնայ այն երեւոյթին, որ մեղքը միայն անցեալի հայրերը չէ որ գործեցին, այլ նաեւ գալիք սերունդները իրենք եւս: Այնպէս ինչպէս անցեալի սերունդը Աստուծոյ սքանչելի գործերը չհասկնալու, բարիքները մոռնալու, ապստամբելու: Հակառակ այս բոլորին, տակաւին Աստուած փրկեց, որպէսզի անով ճանչնան զինք: Պահ մը հաւատացին, բայց շուտով մոռցան: Այս երեւոյթը միայն յատուկ չէ անցեալի սերունդի, բոլոր ժամանակներուն, մարդուս նկարագիրն է: Օրինակ, Կայէն եւ Աբել, այսօր նոյնն է վիճակը: Ուտելիքի ցանկութեամբ բռնուած զԱստուած բարկացուցին, նախանձէ մղուած ընթոստացան Մովսէսի դէմ: Հորթի արձան շինեցին, երկրպագութիւն ըրին: Տէրը որոշեց բնաջնջել զիրենք, բայց ահա Մովսէս միջամտեց, այլապէս Աստուած սպաննած կ'ըլլար զանոնք: Ահա այստեղ միջնորդութեան հարցը, ինչպէս պիտի ըսէ Յակոբոս Առաքեալ, արդարի մը աղօթքը: Այնպէս ինչպէս Աբրահամ միջամտեց Սոդոմ Գոմորի համար: Հետեւաբար, այս Սաղմոսը կը յիշեցնէ նաեւ այսօրուան վիճակը: Ինչո՞վ տարբեր, ոչ մէկ բանով, որուն համար ալ Պօղոս Առաքեալ Կորնթացիներուն գրած իր նամակին մէջ կը յիշեցնէ, թէ այս բոլորը գրուեցան իբրեւ օրինակ, որպէսզի նոյնը չընեն, այսօր ալ խօսքը ուղղուած մեզի, նոյնը չընելու:

Պահապան ամենայնի Քրիստոս,
*աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*